

ԾԱԾԿԱԲԱՆՈՒԹԻՒՆ.¹⁾

[Տ Փ Ո Ղ Ք Ե Ր Է Ն]



I.

Մականցի գգրաւներու գաղտնի բառերէն ու խօսակցութիւններէն.

Ալիւր.—Վառօդ:	Գրնձըկ.—Աղջիկ,
Անիւսկիւր.—Արանդամ.	Գիւմ.—Փոքր:
Անծեղ.—Գրդու մօլլա:	Դա, գդա.—Այդ:
Անմուս.—Կոյր, չնայէր:	Դատական.—Սզ:
Անցկում էր.—Շատ կար:	Դառնակի.—Աղ:
Առկող.—Այլազգ քրիստոնեայ:	Դեղած.—Պանիր:
Ավան, վան.—Վան.	Ջինած: ոտնակ.—Միս:
Աօնկ.—Ականջ:	Ջլնա.—Ջայն:
Բաղարջ.—Լուսին:	Թի ուլուր.—Գերանդի:
Բաշօ.—Արեգակ:	Թուզ.—Ալիւր:
Բարակապուչ.—Ջորի:	Թռիւր.—Դուրս եկած:
Բացէք.—Բանալի:	Թռցրցե.—Գողացաւ:
Բեօն.—Բոն, տուն:	Խանդոց.—Կղպանք:
Բուլեօր.—Ղուրուչ:	Խանդուրձել.—Փակել:
Բօստան խարկուկ.—Անօթի:	Խանող.—Մայր, ծնող:
Գեարհր թուր ա.—Լօշը կլած է:	Խառնակող.—Խարոնիս:
Գիտնակուկէք.—Աւել:	Խելքամաղ.—
Գիտնասրէք.—Յախաւել:	Խուզ:—Մարդ, հայ:
Գիտնափուրիկ.—Բահ, բրիչ:	Միթել.—Ուտել:
Գիտնաքեաղ.—Մանքաղ:	Միւքեաղ.—Ղալիօն:
	Մուկ.—Խմիլ:

*) Մականցի եւ Ողմեցի տփողները, որ ընդմիջտ Հայաստանի զանազան կողմերը կը թափառին, բուրդ ու ռամբակ կը գզեն. Թաղիք կը շինեն. Սորա ստեղծած են իրենց ծածուկ լեզուն, որ «Տփոխքերէն» կը կոչուի. որպէս զի իր ընկերոջ հասկացնել տայ հանդէպինը ինչ մարդ է, ինչպէս հետը վարուելու է եւլն, եթէ հանդէպինը ծանօթ է նոյն խօսակցութեան Ողմեցոյցը կը գործածէ, կամ նոր կստեղծէ:

Ծոքեալ.—կադի
 կակուղ.—Տանքակ:
 Կանթ.—կին:
 Կանչան.—Հրացան:
 Կանչկաքօն.—Նկեղեցի:
 Կանչող.—Մօլլա:
 Կարմիր գլուխ.—Օսմանցի:
 Կեռ.—Գուրդ:
 Կլօ.—Արեգակ:
 Կծան.—Շուն, շան նման կծող:
 Կուղած.—Հաց:
 Կունկ.—Գլուխ:
 Կտրան.—Դանակ, թուր կն. սուր
 բան:
 Կրամուտ.—Բերան:
 Կօճ.—Պառաւ:
 Կօշտ.—Քար:
 Կօռ.—Գուրդ, այլազգի:
 Հառնանցի 1).—Գարի:
 Զէնով.—Թնդանօդ:
 Զկան խուզը.—Զուր, անձրև:
 Զկան տպացող.—Զուր:
 Դհուլ.—Էշ:
 Զեօղ.—Ծառ:
 Զմեր ի.—Մեռած է:
 Մազվուր.—Քահանայ
 Ման.—Արմատ:
 Մանեւ.—Հասկանալ, զգալ:
 Մանրահատ.—Կորեկ:
 Մանք.—Խօսք:
 Մաքեօզ.—Լեզու:
 Մանքել.—Խօսիլ:
 Մատ.—Նղբայր:
 Մատմ.—Բիշ-

Մաքին.—Նգանդամ, կաշէյէ տոպ-
 րակ
 Մաքուր.—Հող:
 Մէր.—Հող:
 Մէրան.—Մածուն:
 Մոյ.—Միթէ:
 Մունջ.—Անկողին, շոր:
 Մուսիկ.—Մութ:
 Մուսկ.—Աչք:
 Մուսկի.—Նայէ:
 Մուսկցէ.—Տեսայ:
 Մօրթագլուխ.—Պարսիկ:
 Մօզ.—Ապա:
 Նա.—Այն, այս:
 Նալ.—Հինգ—վեց զուրուշանոց
 ստակ:
 Նահան.—Այն:
 Նանենցի 2).—Ցորեան:
 Ներքնակ.—Կին:
 Նուֆիլ.—Քնել:
 Շուռ եկող.—Ռէս:
 Շնծեծ.—Ի՛ր, շուն ծեծելու փայտ:
 Շնկտուր.—Բուրդ:
 Ուտաման.—Բերան:
 Ոստան.—Ստամոքս:
 Զուր.—Արծաթ, ասկի պղինձ դրամ:
 Պարկ.—Թուղթ:
 Պարկի պուճախ.—Թուղթ:
 Պէդարց 3).—Խաղող:
 Պսպղուն.—Իւզ, իւզալի կերակուր
 հերիսա:
 Սանկուիր.—Ամորձիք:
 Սանտու տինկ.—Այլ և կին:
 Սև.—Նգալի:
 Սև ցախ.—Սև մօրուս:
 Սևսըտակ.—Անցազրի թուղթ:

1) Հառնան զիւղի անուն է, ուր լաւ զարի կածի:

2) Նանենց հացաշատ զիւղի անունով:

3) Գիւղի անուն է, ուր խաղող շատ կայ:

Սըւարկելի.—Ամօթանք կրել
Սրուկ.—Դանակ և սուր բան:

Վազան.—Ծառայ:

Վաղկան.—Շուն:

Վանք.—Գող:

Վանքի.—Գողացի:

Վանքի.—Չկայ:

Վառիկ.—Հարս:

Վաստրկող.—Հայր:

Վարասցու.—Բեր:

Վարի, վարինք.—Գնան, գնանք:

Վռուռանք, հալկոր, պառաւ, ժա-
ծիկ:

Վերածածրկ.—Վապերտ:

Տախտակ.—Լեզու:

Տակ.—ձիւղ:

Տափակ.—Ռուս:

Տափան.—Մօրուս:

Տափ խանող.—Հայր:

Անտրպացանք, էղանք ցող.—Ամօթանք կրեցինք—գողութիւնը
յայտնուեցաւ:

Բաշօն վարըց. մուտիկի ի.—Արեգակը գնաց, մութ—երկոյ է:
Բաշօն վարըց. ձկան խուզը չվարըց տիպ էնինք.—Արեգակը
գնաց, ծածկուեցաւ. իսկ անձրեւը չդադրեցաւ աշխարհէինք:

Գնան, քօշու մօտէն չուր տպացու.—Գնան, աղայի մօտէն դրամ
ուզէ:

Դէղած դէզ ի, արդար ծովի. ամա երդիքէն իջին, տըկէն վարըն.
—Փլաւը չատ լիքն է, իւղը տակը—յատակը չատ, (զգալը) յատակը
զարնեն, տանեն:

—Դա ինչ կանչելաբօն ի.—Այդ ինչ եկեղեցի է:

—Այն, քիտ տուն չաւրը. մօյ դիւ չը'ս գլտի. ինչ կանչելա-
բօն ի. չէ, քեարէ քչող ճմեր ի, անիւ պապղուն ի, ծեթենք:—Վայ
քո տուն չաւիրի միթէ չգիտես, ինչ ժամ է, չէ գիւղի ախար մեռած
է, նորա հերետան է, ուտենք:

Էրթամ շրեշտ չախս անեմ:

Իմ քեաք, ըպա յիւր ի իմ լաք:

—Կտուրմ պարկը կտուր տու.—Փոքը ինչ թուղթ տուր:

—Վանք ի.—Չկայ:

Խուզ մանքից կանթին քի ձեթում տպացըցու խուզին, կանթը

Տիպ.—Գեղեցիկ:

Տիպ կենէր.—Կը չինէր:

Տպացըցէ.—Տեղաւորէ, կը զար-
նէ:

Տփող.—Գլորար:

Տանել, մանք տալ.—Ուշը ուրիշ
կողմ դարձնել:

Տախ.—Մօրուս:

Տաքուիլ.—Գնալ, անհետանալ:

Տուն ցախ.—Սոխտակ մօրուս:

Տուռկ.—Տղայ:

Փեկուռ.—Հարս:

Փէափ.—Ոտք:

Քեանըմ.—Շատ, չափազանց:

Քեար.—Գիւղ:

Քչող.—Ռէս:

Քրինդ.—Քիթ:

Քրեշտ.—Ձեռք, ձեռաց մատներ:

Քոշ.—Աղա:

խուզիւն մանքից քի ձէթում վանք իւ խաւքն մէկ դառ ջիւր տըպաս-
ցըցուց, էկայ.—Մարդ ասաց կնոջ թէ «տուր մարդուն»։ Կինը մար-
դուն ասաց «չկայ»։ մտրդը օղի մի տուեց, եկայ։

Խուզ տիպն էր, ամա կանթ մուտեր զարկից.—Մարդը լաւ էր,
բայց կինը նայեցաւ, տեսաւ։

Խուզ տիպն էր, էրկու բռնիօր էլ կը տպասցըցէր. կանթը
մանքից, չի տպասցըցուց.—Մարդը շատ լաւ էր, երկու զուռուշ ևս
կտար, կինն որ խօսեցաւ, չտուեց։

Կծրկ չունի, կծկըներ անտիպ եղեր ի։

—Ձուկ իսկի կապերիս։

Կուրկ կապեր էմ, կծիկ չի կծկուեր ի։

Ման անտիպ ի. սըւտըկ ի կցէ.—Արմատը անպէտք է. չորնա-
լու լրայ է։

Մանքերցի մէկ նալ տպասցըցուց։

—Մանքերցի, չտպաստըցուց.—Խօսեցար, չտուեց։

Մը վանքի, մը վասցի. կը սըւտըկիս.—Մի գողանար բերեր,
ամօթանք կը կրես։

Մուխսին զնաց էրուսաղէմ.—Գողոնը անգաւորեցի։

—Ուստա՛, ուստա՛, վարի նահան կօռու բեօն. մատմ վոռուանք
վարասցու. ձիթինք.—Վարպետ, վարպետ, զնա այն քրդու տուն,
քիչ մը ժաժիկ բեր, ուտենք։

—Ուստա՛, ուստա՛. նա կօռու փեկուր քեանիմ պիպ ի իս
մօսկցէ, սնծեղ զնա տիպ կէնէր.—Վարպետ, վան, այն քրդու հար-
սը շատ գեղեցիկ է. ես տեսայ, մօլլան զայն կը գործածէր։

—Ձուր կապերիս չուր։

—Կապեր իմ, արմատ չի կապեր ի։

Ուստա՛, ձենի, մի խրկցիս.—Վարպետ, իմացան, մեր հալըր։

Սարերու բերնից էկաւ. անտըպացաւ.—Փամին եկաւ, չորացաւ։

—Վան, նա քեարի մազվուր քեանիմ անտիպ ի, այն գիւղի քա-
հանայն ինչ կոչտ—կոպիտ է։

Մօյու, վալա սեօտ կըսիս, մէկէլ տարը մինք վից տփող էնք.
վարըցընք անիւ բեօն, մօյու ոտնակ, կուղած, պղպըղուն, վօռուանք
անցկուամէր, վօւր վազկանքտիւրն էր չըն ծիթի.—Միթէ, փուտ կասես,
անցեալ տարի վից գըրար էինք, զնացինք նորա տունը. միս, հաց,
իւղ, ժաժիկ այնչափ շատ էր, որ շներն ևս չէին ուտէր։

Վարընք նահան կանիւլաբեօն, պղպըղուն ձիթինք.—Գնանք
այն եկեղեցին հեքիսայ ուտենք։

Վարընք. չընչտ վարասցինք. շախնինք։

Վոռուանք բեօն չի, մի բան տիպ ի.—Մերը փունը չէ. մեր
գործ յաջող է։

Տղան, մի տպանայ, կանթ մուսէ.—Մի գողանար, կինը աչքի
տակով կը նայէ։

2.

Յիվրիկցոց բառառուով.

Տիրերիկի հայեր մեծ մասամբ կլայեկադործ են. կը տարածուին շրջակայ թուրք գիւղերու մէջ իրենց արհեստն ի գործ կը դնեն: Սոքա ունին իրենց համար ծածուկ լիզու. այլաբանօրէն կը խօսին յաճախորդին հետ և իրարու հետ:

—«Այ տղա, կարճ կապէ. դերձանը կը ճերմկի». կասէ հասկըցնելով աշակերտին կամ ընկերոջը թէ ստախօտութիւնդ յայտ նուեալու վրայ է, լսէ:

—«Հայ տղա, ծղին լաւ վարձէ».—Կուշտ կեր, փորդ պնդացուր, ասել կուզէ:

«Հայ տղա, կթման կով է».—Առատաձեռն է և սակարկելու մէջ դիմադրող չէ, այլստիւր բարձր գնով վաճառես:

«Հայ տղա», Մէմիշ աջան ճենճոտ, անթիքա հեծման յէ.—Հարուստ և առատաձեռն է, ինչ ուզես, կարող ես ստանալ:

«Հասան աղան ջորու հար է».—Ջորիի հայր էջն է, ասել կուզէ թէ յիմար է, ինչ կերպ ուզես, ստանաս, վտանգ չկայ:

«Մէյ մարդ, Հասան աղան թանի շուն է. պէտք է ունուզ վերմիւր ընկնք. քամէ մինչև տակը».—Թուրքին հասկացնել կուզէ թէ ծանօթ է Հասան աղան, արժան տալու են. իսկ ընկերոջ ևս կը հասկացնէ թէ թանի շան պէս ազա՛հ է, ուշադրութիւն դարձուր որ չխափուիս մինչև վերջ:

«Շուն քեօփէքաէն ալլաֆ օլտուն, իթարէ կըմէզ». (շունը չնէն ցած լինի. արժէքը չէ).—Յաճախորդը երբ փորդ գին կտայ. նորա հասկացնել կուզէ թէ (իբր երդում) չնէ ստոր լինի՞մ որ կը վնասեմ. իսկ իր ասածն է «շունը չնէն ստոր լինի»:

«Տղա, կզկալին (կրծկալ) նստածս շուն խեղդող է բերեր».—Յաճախորդը իրեն հետ գործէ ու առևտրէ լաւ հասկացող բերած է, արժան սակարկութիւն պիտի լինի, դու ևս գործը լաւ մի կատարէր, հասկացնել կուզէ ընկերոջը:

«Տղա, մուսուլման (թիթեղէ ջրի բաժակ) տար, ջրի բուղուկին մէջ ձգե, օր ծակը կալուի».—Աշակերտին հասկացնել կուզէ թէ բաժակը մինչև բերան լեցուի:

«Տեօնէն օեկէմէն օաօի օլտուն» (դարձողը ջրաղացքի քար լինի).—Հասկացնել կուզէ թէ յաճախորդի կամքին պատրաստ եմ զիջանելու:

«Փախլանի օղին էկած՝ քառսուն ձիաւորով քաղքի բոլորը բռնած է, քաղաքի եօթը թաղերը պիտի առնէ. —Մեծ պահք, որ եօթ չաբաթ է:

Աստուած գլխեդ վերը պահէ: